

ԹԵՐԹԻԿ-ՆԵՐԴԻՐ՝ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԻՎԱՆԴԻ ՀԱՍԱՐ

**Պրոստամոլ ունո
փափուկ պատիճներ, 320 մգ
Սերենոա արմավի պտուղների մզվածք**

Սույն դեղամիջոցն անհրաժեշտ է միշտ ընդունել տվյալ ներդիր-թերթիկում շարադրված ցուցումներին կամ բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին խիստ համապատասխան:

- Պահպանեք ներդիր-թերթիկը: Հնարավոր է անհրաժեշտություն առաջանա այն նորից ընթերցել:
- Եթե Ձեզ անհրաժեշտ է լրացուցիչ տեղեկատվություն կամ խորհուրդ, դիմեք դեղատան աշխատակցին:
- Որևէ կողմնակի ազդեցության առաջացման դեպքում դիմեք բժշկի կամ դեղատան աշխատակցի: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցության, այդ թվում նրանց, որոնք սույն ներդիր-թերթիկում նկարագրված չեն:
- Եթե չեք ապաքինվում կամ հիվանդության ախտանիշերը խորացել են, դիմեք բժշկի:

Սույն ներդիր-թերթիկի բովանդակությունը՝

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Պրոստամոլ ունո դեղամիջոցը և ինչի՞ համար է այն օգտագործվում:

2. Ի՞նչ է պետք իմանալ Պրոստամոլ ունո դեղամիջոցն ընդունելուց առաջ:

3. Ինչպե՞ս կիրառել Պրոստամոլ ունո դեղամիջոցը:

4. Հնարավոր կողմնակի ազդեցություն:

5. Ինչպե՞ս պահպանել Պրոստամոլ ունո դեղամիջոցը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն:

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում Պրոստամոլ ունո դեղամիջոցը և ինչի՞ համար է այն օգտագործվում:

Պրոստամոլ ունո դեղամիջոցում պարունակվում է սերենոա արմավի պտուղների մզվածք (*Serenoae repentis fructus extractum*), որը հանդիսանում է բուսական ուռուլոգիական միջոց (շագանակագեղձի հիվանդությունների բուժման դեղամիջոց): Պրոստամոլ ունոն օգտագործվում է 1 և 2 փուլերում շագանակագեղձի բարորակ մեծացման (ոչ չարորակ ծագման) հետևանքով դժվարացած միզարձակմամբ տառապող մեծահասակ տղամարդկանց բուժման համար (միզապարկի դատարկման դժվարացում):

Շագանակագեղձի ոչ չարորակ մեծացման դասակարգումն ըստ փուլերի (շագանակագեղձի բարորակ հիպերպլազիա)

Փուլ	Անվանում	Խանգարումներ
I	գրգռման փուլ	- միզարձակման սկզբի ուշացում - միզարձակման ժամանակի երկարացում և ընդմիջվող միզարձակում

		<ul style="list-style-type: none"> - մեզի շիթի թուլացում - միզարձակումների հաճախականության մեծացում (հատկապես գիշերը) - միզապարկը դատարկվում է ամբողջությամբ
II	մնացորդային մեզի փուլ	<ul style="list-style-type: none"> - միզարձակման շարունակվող խանգարումներ - միզապարկի ոչ լրիվ դատարկում, մեզը մնում է միզապարկում նույնիսկ միզարձակումից հետո: Հիվանդը զգում է, որ միզապարկը ամբողջությամբ չի դատարկվել

Շագանակագեղձի բարորակ հիպերպլազիայի ժամանակ կարող են առաջանալ հետևյալ ախտանիշերը՝

- հաճախացած միզարձակում, հատկապես գիշերային ժամկերին
- մեզի թույլ կամ ընդմիջվող շիթ
- միզարձակում կաթիլներով
- միզապարկի ոչ լրիվ դատարկման զգացողություն
- միզելիս ցավոտություն
- սեռական ֆունկցիայի խանգարում:

Նշված ախտանիշերից մեծամասնությունը առաջանում են շագանակագեղձի մեծացման պատճառով, ինչի հետևանքով միզարձակման կանալը սեղմվում է (որի միջով կատարվում է միզապարկից մեզի հոսքը):

Պրոստատոլ ունոն կանխարգելում է շագանակագեղձի հյուսվածքի հետագա մեծացումը:

Պրոստատոլ ունոն չի խանգարում սեռական ֆունկցիան:

Եթե չեք ապաքինվում կամ հիվանդության ախտանիշերը խորացել են, դիմեք բժշկի:

2. Ի՞նչ է պետք իմանալ Պրոստատոլ ունոն դեղամիջոցն ընդունելուց առաջ:

Պրոստատոլ ունոն չի կարելի ընդունել՝

Սերենոա արմավի պտուղների մզվածքի կամ տվյալ դեղամիջոցի ցանկացած այլ բաղադրիչի նկատմամբ ալերգիայի դեպքում (նշված են բաժին 6):

Նախազգուշացումներ և նախազգուշական միջոցներ

Պրոստատոլ ունոն դեղամիջոցն ընդունելուց առաջ դիմեք բժշկի, դեղատան աշխատակցի կամ բուժքրոջ խորհրդատվությանը:

Պրոստատոլ ունոն միայն թեթևացնում է ախտանիշերը շագանակագեղձի մեծացման ժամանակ: Դա չի հանգեցնում շագանակագեղձի մեծացման հետադարձ զարգացմանը: Այդ պատճառով անհրաժեշտ է կանոնավոր կերպով խորհրդակցել բուժող բժշկի հետ:

Անհրաժեշտ է դիմել բժշկի, հատկապես եթե՝

Ձեզ մոտ առաջացել է տենդ, սպազմեր կամ մեզում հայտնվել է արյուն,

Դուք ցավ եք զգում միզելիս,

Ձեզ մոտ մշտապես առկա է մեզի կաթիլային արտադրություն (անմիզապահություն միզապարկի գերլեցման հետևանքով),

Դուք ցանկացել եք միզել, բայց հանկարծակի ունակ չեք եղել դա անել (մեզի սուր կանգ):

Երեխաներ և դեռահասներ

Մինչև 18 տարեկան երեխաների և դեռահասների կողմից դեղամիջոցն ընդունել խորհուրդ չի տրվում:

Պրոստամոլ ունո դեղամիջոցի և այլ դեղամիջոցների ընդունումը

Եթե Դուք այժմ ընդունում եք, կամ ոչ վաղ անցյալում ընդունել եք կամ կարող է ընդունած լինեք ցանկացած դեղամիջոցներ, հայտնեք դրա մասին բժշկին կամ դեղատան աշխատակցին:

Որոշ դեպքերում հաղորդվել են վարՖարինի (արյան մակարդեղիությանը խոչընդոտող դեղամիջոց) հետ ենթադրյալ փոխազդեցության մասին: Նկարագրվել է ՄՆՀ մակարդակի բարձրացում:

Հղիություն և կրծքով կերակրման ժամանակաշրջան

Պրոստամոլ ունոն ցուցված չէ կանանց կողմից կիրառելու համար, այդ պատճառով հղիության և կրծքով կերակրելու ժամանակ խորհուրդ չի տրվում: Որդեճնության ֆունկցիայի վրա ազդեցության մասին տվյալներ չկան:

Ազդեցությունը տրանսպորտային միջոցներ վարելու և մեքենաներ սպասարկելու ունակության վրա

Տրանսպորտային միջոցներ վարելու և մեքենաներ սպասարկելու ունակության վրա ազդեցության հետազոտություններ չեն անցկացվել:

3. Ինչպե՞ս ընդունել Պրոստամոլ ունո դեղամիջոցը

Սույն դեղամիջոցն անհրաժեշտ է միշտ ընդունել տվյալ ներդիր-թերթիկում շարադրված ցուցումներին կամ բուժող բժշկի կամ դեղատան աշխատակցի ցուցումներին խիստ համապատասխան: Եթե Դուք համոզված չեք, ապա խորհրդակցեք բժշկի կամ դեղատան աշխատակցի հետ:

Դոզավորում

Խորհուրդ տրվող չափաբաժին՝ Պրոստամոլ ունո-ն ընդունում են 1 փափուկ պատիճ օրական 1 անգամ միննույն ժամանակ: Փափուկ պատիճներն անհրաժեշտ է ընդունել ուտելուց հետո, կուլ տալով ամբողջությամբ և խմելով բավարար քանակի հեղուկ:

Դեղամիջոցի կիրառումը երեխաների ու դեռահասների կողմից

Երեխաներին ու մինչև 18 տարեկան դեռահասներին Պրոստամոլ ունո-ն ցուցված չէ:

Բուժման տևողությունը՝

Բուժման տևողությունը կախված է հիվանդության տեսակից, ծանրության աստիճանից ու ընթացքից և չի սահմանափակվում: Շարունակական բուժման վերաբերյալ խորհրդակցեք բուժող բժշկի հետ:

Պրոստամոլ ունո դեղամիջոցով բուժումը երկարատև է ու մշտական: Հաջող բուժման համար կարևոր է դեղամիջոցի ամենօրյա կանոնավոր ընդունումը: Ախտանիշերի թեթևացում կարելի է սպասել միայն մոտավորապես 6 շաբաթ հետո: Ամբողջական արդյունավետության կարելի է հասնել մոտ երեք ամիս հետո:

Եթե Դուք գերազանցել եք Պրոստամոլ ունո դեղամիջոցի առաջարկված դոզան
Առ այժմ Պրոստամոլ ունո դեղամիջոցով գերդոզավորման դեպքեր չեն նշվել:

Եթե մոռացել եք ընդունել Պրոստամոլ ունո դեղամիջոցը
Հարկավոր չէ ընդունել դեղամիջոցի կրկնակի դեղաչափ բաց թողնվածը հատուցելու համար:

Եթե Դուք դադարեցրել եք ընդունել Պրոստամոլ ունո դեղամիջոցը
Եթե Դուք դադարեցրել եք ընդունել Պրոստամոլ ունո դեղամիջոցը, ապա ախտանիշերը կարող են նորից ի հայտ գալ: Եթե Դուք ունեք լրացուցիչ հարցեր տվյալ դեղամիջոցն ընդունելու վերաբերյալ, դիմեք բժշկի կամ դեղատան աշխատակցի:

4. Հնարավոր կողմնակի ազդեցություններ

Ինչպես և բոլոր դեղամիջոցները, սույն դեղամիջոցը նույնպես կարող է առաջացնել կողմնակի ազդեցություն, չնայած ոչ բոլորի մոտ:

Երբեմն առաջացող կողմնակի երևույթներ, կարող են ի հայտ գալ 100 հիվանդից 1 մոտ

Սրտխառնոց, փսխում, լուծ, փորացավ (հատկապես սոված ժամանակ դեղամիջոցն ընդունելիս):

Հաճախականությունն անհայտ է (առկա տվյալների հիման վրա գնահատման ենթակա չէ)

Կարող են լինել ալերգիկ կամ գերզգայունության ռեակցիաներ:

Կարող է առաջանալ գլխացավ:

Հաղորդումներ կողմնակի երևույթների մասին

Որևէ կողմնակի ազդեցության առաջացման դեպքում դրա մասին հայտնեք ձեր բժշկին կամ դեղատան աշխատակցին: Դա վերաբերում է ցանկացած հնարավոր կողմնակի ազդեցությանը, այդ թվում նաև նրանց, որոնք նկարագրված չեն սույն ներդիր-թերթիկում:

Հայտնելով կողմնակի ազդեցության մասին, Դուք կարող եք օգնել հավաքել ավելի շատ տեղեկություններ տվյալ դեղամիջոցի անվտանգության մասին:

5. Ինչպե՞ս պահպանել Պրոստամոլ ունո դեղամիջոց

Պահպանել 30°C ջերմաստիճանից ոչ բարձր պայմաններում:

Պահպանել երեխաներից հեռու տեղում:

Տվյալ դեղամիջոցը չօգտագործել ծալած տուփի վրա «Պիտանի է մինչև» բառերից հետո նշված պիտանիության ժամկետը լրանալուց հետո: Պիտանիության ժամկետը վերաբերում է նշված ամսվա վերջին օրվան:

Ոչ մի դեղամիջոց մի՛ թափեք կոյուղու կամ կենցաղային աղբի մեջ: Ձեզ չպետքական դեղամիջոցի օգտահանման վերաբերյալ խորհրդակցեք դեղատան աշխատակցի հետ: Այդ միջոցառումները նպաստում են շրջակա միջավայրի պաշտպանությանը:

6. Փաթեթի պարունակությունն ու այլ տեղեկատվություն

Բաց թողնման պայմանները

Դեղամիջոցը բաց է թողնվում առանց դեղատոմսի:

Պրոստամոլ ունո դեղամիջոցի բաղադրությունը

Մեկ պատիճում պարունակվում է 320 մգ սերենոա արմավի պտուղների մզվածք (9-11:1):

Այլ բաղադրիչներ

Ժելատին սուկցինիլիրացված, գլիցերին, թորած ջուր, տիտանի դիօքսիդի ներկանյութ (E171), երկաթի օքսիդ դեղին (E 172), երկաթի օքսիդ սև (E 172) և կարմինային լակ (E 120):

Պրոստամոլ ունո դեղամիջոցի արտաքին տեսքն ու պարունակությունը

Ձվածիր փափուկ ժելատինային պատիճներ ոչ թափանցիկ, երկգույն կարմարա-սև թաղանթով, լցված շագանակագույնից մինչև դեղնավուն կամ կանաչա-շագանակագույն հեղուկով (յուղային):

Օրիգինալ փաթեթներ՝ 15, 30, 60, 120, 180, 200 փափուկ պատիճներով:

Վաճառքում կարող են լինել ոչ բոլոր չափսերի փաթեթներ:

Գրանցված վկայականի սեփականատերը

Բեռլին-Խեմի ԱԳ (Մենարինի գրուպ)

Գլինիկեր Վեգ 125

12489 Բեռլին

Գերմանիա

Չչափածրարված արտադրանքի արտադրող

կատալենո Գերմանիա Էբերբախ ԳմբԽ

Գամելսբախերշտրասե 2

69412 Էբերբախ

Գերմանիա

Փաթեթ

Բեռլին-Խեմի ԱԳ

Գլինիկեր Վեգ 125

12489 Բեռլին

Գերմանիա

Սերիայի թողարկում
Բեռլին-Խեմի ԱԳ
Գլինիկեր Վեգ 125
12489 Բեռլին
Գերմանիա

Ներդիր-թերթիկի վերջին խմբագրության ամսաթիվը՝ 09.2018: